ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հունիսի 2017 թվականի N 557 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Միջազգային տնտեսական համաժողովին մասնակցելու նպատակով 2017 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 3-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) պատվիրակության անդամների՝ համաձայն հավելվածի, գործուղման հետ կապված ծախսերը կատարել՝ Վաչե Գաբրիելյանինը, Էմիլ Տարասյանինը, Բորիս Դեմիրխանյանինը և Ռաֆայել Ավետիսյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին, այդ թվում՝ գիշերավարձի ծախսերը՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

2. Ընդունել ի գիտություն, որ Ալեքսանդր Խաչատուրյանի, Էրիկ Գյուլազյանի և Գևորգ Մանթաշյանի՝ 2017 թվականի մայիսի 31-ից մինչև հունիսի 3-ը Ռուսաստանի

Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարին՝ եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ ներկայացնել Սանկտ Պետերբուրգ գործուղման արդյունքների մասին հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2017 թ. հունիսի 7
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2017 թ.
հունիսի 7 -ի N 557 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՀՈՒՆԻՍԻ 3-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ) ՄԵԿՆԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Վ. Գաբրիելյան	- ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար
Է. Տարասյան	- ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
Բ. Դեմիրխանյան	- ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ
Ա. Խաչատուրյան	- «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն (համաձայնությամբ)
Ռ. Ավետիսյան	- ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարի խորհրդական
Է. Գյուլազյան	- «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի խորհրդական (համաձայնությամբ)
Գ. Մանթաշյան	- «Ռազմավարական նախաձեռնությունների կենտրոն» հիմնադրամի փորձագետ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

557v.voroshum